Պարույր Սևակ

Չեմ հարգում

Մինչ տարին ունի տասներկու ամիս ու չորս եղանակ,
Տասներկու անգամ սա եղանակ է մի օրում փոխում:
Եթե դուք պետք եք և, դիցուք, նույնիսկ հաշիշ եք ծխում,
Նա էլ է ծխում, որպեսզի հանկարծ... դուք չնեղանաք:
Ի՜նչ էլ նվագեն՝ նա է պարողը,
Ի՜նչ էլ կարել տան՝ նա է կարողը,
Ո՛ր ծառն էլ ցույց տան՝ նա է քարողը:
Հարգո՞ւմ եք նրան:
Իսկ հապա սրա՞ն,
Որ ասես լինի առածի պարան.
Հապա փո՛րձ արա ու ցա՛խ դիր վրան...
Չեմ հարգում շանն էլ, որին չար տերը
Անտեղի տեղը որքան ծեծում է,
Այնքան նա լիզում տիրոջ ոտերը՝
Իրեն տրորո՛ղ-ջարդո՛ղ ոտերը,
Եվ կծելու տեղ լոկ կաղկանձում է.
Եկեք միասին չհարգենք նրա՛նց,
Ովքեր սերտում են և ոչ թե դատում,
Ճառո՛ւմ են - բնավ չե՛ն կշռադատում.
Ովքեր չեն ջոկում ո՛չ թացը չորից,
Ո՛չ էլ տարբերում անդունդը ձորից.

Ովքեր գրածի տառն են ընթերցում,
Ովքեր քնածին մեռած են կարծում,
Ովքեր կարծում են
Ծուխը՝ հրրաբուխ,
Իսկ լացը՝ հարբուխ...
Չեմ հարգում նաև ա՛յն նորությունը,
Որ վաղեմության նոր տարբերակն է,
Ա՛յն չորությունը.
Որ չի տարբերվում անգթությունից,
Անհուն թվացող ա՛յն խորությունը,
Որտեղ աճում է եղեգն ու ջրմուռ,
Եվ հիմարավուն ա՛յն բարությունը,
Որ մոռանում է կսկիծ ու մրմուռ...
Հարգած չունենամ ա՛յն ծերությունն էլ,
Որ իմաստնության նույնիսկ բո՛ւյր չունի:
Հարգած չունենամ ա՛յն ծռությունն էլ,
Որ Սասնա ծռից մի նշո՛ւյլ չունի,
Եվ հնարավոր ա՛յն հարությունը,
Որ ավարտվում է լոկ... համբարձումո՛վ,
Ո՛չ թե մարդկանց մեջ վերադարձումով...
Ե՛վ ես մի անգամ չհարգեմ նրանց,
Ովքեր մտնում են հոտած գաղջ անկյուն,
Երբ կարող էին թարմ օդում մնալ,
Թեկուզև այնտեղ մի փոքր մրսել
(Այդտեղ եմ հասել
Երբեմն ես է՛լ)...
Ովքեր մթնում են,
Երբ կարող էին միշտ մնալ լուսե,
(Ինձ էլ երբեմն խավարն է գրկում)...
Ովքեր վատնում են

Իրենց ուժերը փսփրսուքի մեջ,
Մինչ կարող էին բարձրաձայն խոսել
(Երբեմրն նաև ես ի՛նձ չեմ հարգում)...
Երբեմրն նաև ես ի՛նձ չեմ հարգում...

25, 27.V.1957թ.
Մոսկվա